

Թեան մը զոհ եղաւ հանդերձ 80 ընկե-  
րակցօք :

Միքայել Շըվալիէ . — Գաղղիացի է .  
րևելի տնտեսադէտ , զանազան ժամա-  
նակ երեսփոխան և անգամ՝ աշխար-  
հահանգիսից յանձնաժողովոց : Մեռաւ  
73 տարեկան 'ի 28 նոյեմբերի :

Պետրոս Բառնիզէլի . — Իտալացի  
աստեղբարայն կանոնիկոս 'ի կղերանո-  
ցին Աղեքսանդրիոյ Բիմոնդի , յորում  
ինքնին կանգնել տուեր էր մէտէորա-  
բանութեան դիտարան մը . իրեն յա-  
տուկ ճիւղն էր ասուպնեբու գիտու-  
թիւնը , որուն վրայ օգտակար գրուած  
ներ ըրած է . նշանաւոր է դարձեալ ի-

րեն ձողմաչափ գործին : Մեռաւ 56  
տարեկան , դեկտեմբերի 16ին :

Յովսէփ Ալկեցցաւնա . — Իտալացի նը-  
շանաւոր զօրավար : Տասնուվեց տարե-  
կան՝ Մեծին Նաբոլէոնի բանակին մէջ  
մտաւ ընդդէմ դաշնակցաց , և մինչև  
ց1866 գրեթէ իտալիոյ ամենայն պա-  
տերազմաց մասնակից եղաւ : Մեռաւ  
իննսնամեայ 'ի Հռովմ , դեկտեմբ . 25ին :

Յովնաննէս Դաւրեան լազարէլ . —  
Մին 'ի հայազգի քաջ զօրավարաց՝  
Ռուսիոյ ծառայութեան մէջ , որ վերջին  
պատերազմիս ժամանակ մեծ օգնու-  
թիւն ըրաւ իր Տէրութեան Ասիոյ կող-  
մը : Մեռաւ յօգոստոսի :

## ՆՈՐԱՏԻՊ ՄԱՏԵԱՆ

### ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԻՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԱԶԳԱՅ ԵՒ ՅՈՒՆԱՅ

Այս նոր հրատարակեալ դասական  
պատմութեանս առաւելութիւնն առ հնովք՝  
իր քննադատական ողջ ոգին և էականն  
համառօտեմն է , զոր իմանալու համար մի  
անգամ միայն կարգաւն բաւական է : —  
Այս գոյնն աշխատութեան առաջնորդ և  
ուղղիչն է Արեւիյան պատմաբան մասին  
մէջ Փ . Շմիթ երևելի անգղիացի պատմա-  
գէտն և Գուլիէլմոս Ռից գերմանացի . իսկ  
Յունաց պատմութիւնը թ . Սանէզի իտալա-  
ցւոյն Յունաց պատմութեան համառօտն  
է : Ի դիւրութիւն վարժապետաց և աշա-  
կերտաց միանգամայն իւրաքանչիւր ազգին  
պատմութեան վերջը՝ ժամանակագրու-  
թիւնն աւելցուցինք , որ թէ և շատ տեղ  
գեթ արդի քննադատական պատմութեան  
չի համապատասխանէ , բայց ինչպէս եր-  
բմն՝ հիմայ ալ նոյնպէս օտարաձայն չէ :

Երջանիկ և երանիկ կը համարինք  
զմեզ՝ եթէ մեր մտաց տեսութեամբ և այս

գոյնն տարրական աշխատութեամբ մենք  
ալ կարենանք ձեռնտու սեպուիլ ազգային  
վարժապետաց . և յորդորել զոմանս՝ մա-  
նաւանդ թէ զրազումս իսկ համազգի ու-  
սումնասէր մանկանց և պատանեաց , թա-  
փանցել աւելի ոյն աշխարհաց հին պատ-  
մութեան խորը , որոնք եղան երբեմն  
մարդկութեան և քաղաքականութեան ու-  
րորոց և խանձարուր : Մեր կողմանէ քա-  
նացինք գոնէ ըստ կարելոյն այնպիսի դա-  
տական հին պատմութիւն մը հրատարակել  
որ զպատմական ստոյգ դէպս արդի նորանոր  
ժանօթութեամբ և քննադատութեամբ ներ-  
կայացնէ :

Պատմագէտ վարժապետաց ուղիջ  
տեսութիւնը , անաշառ վարկն և ներդա-  
միտ դատաստանն և սիրով ընդունելու-  
թիւնը կը յուսանք թէ պիտի սրտասնդէ  
զմեզ աւելի մեծազունին ձեռք զարնելու :

ՈՒՂՂԵԼԻՄ . — Այս Պրակիս՝ Կոստանդնուպոլիս , Էսմէօյ Տէ Ափէլի Իտալացոյ հատուածոյն գլուխ  
(էջ 289) , պէտք է կարդալ ՍՏԱՐՊՈՒ ՎԵՐՆԱԳԻՐՆ :  
Նաև նախընթաց Պրակին մէջ (Գ . էջ 260 , յառաջին սեան , սող 24) Աբուէլն բառը , Աբուհէյ  
գիտեալու է :